ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ • ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

ՃԵՄԱՐԱՆ
LYCEUM

«ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ»
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ



ROUND SQUARE

COLEGIO DEL MUNDO • WORLD SCHOOL • ÉCOLE DU MONDE

CIS MEMBER

«Ծիրակացու ճեմարան»
միջազգային գիտակրթական համալիր

ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑԻ ԵՎ

ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2026-2027

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 4
2. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ՏԵՂԵՐՈՒՄ 4
3. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐՈՒՄ 4
4. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (հունիս ամիս) 5
5. ԸՆԹԱՑԻԿ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 6
(առաջին կիսամյակի ավարտին՝ դեկտեմբեր-հունվար ամիսներին)
6. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ 7
7. ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 8
8. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 9
9. ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ 9
10. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ 9
11. ՀԱՎԵԼՎԱԾ 1 10

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում Միջազգային բակալավրիատի (International Baccalaurate – IB) (այսուհետ՝ ՄԲ)՝ նախադպրոցական-տարրական, միջին և ավագ տարիքային խմբերի ծրագրերով հավատարմագրված միակ հաստատությունը՝ **«Շիրակացու Ճեմարան» միջազգային գիտակրթական համալիրը (այսուհետ՝ Ճեմարան)**, կատարում է մրցութային ընդունելություն Հայաստանի, Սփյուռքի և արտերկրի նախադպրոցական տարիքի երեխաների և հանրակրթական դպրոցների շնորհալի սովորողների համար՝ ՀՀ պետական և միջազգային ամենաբարձր չափանիշներին համապատասխանող բարձրակարգ և լիարժեք կրթություն ապահովելու նպատակով:

Ճեմարանի առաքելությունն է կերտել ազգային հենքի վրա ձևավորված համամարդկային արժեքներ կրող իսկական մտավորական և քաղաքացի:

2010թ.-ից Ճեմարանը *«Ռաունդ Սքվեր» (Round Square) միջազգային դպրոցների համաշխարհային ասոցիացիայի լիիրավ անդամ է: 2008թ.-ից Ճեմարանը ԱՊՀ երկրների ՄԲ դպրոցների ասոցիացիայի լիիրավ անդամ է:*

2013թ. Ճեմարանի մանկակրթարան-տարրական դպրոցը (այսուհետ՝կրտսեր դպրոց), 2014թ.՝ միջին և ավագ դպրոցները հավատարմագրվել են ՄԲ համաշխարհային գրասենյակի կողմից:

1990թ.-ից Ճեմարանում իրականացվում է «Շնորհալի երեխաների բացահայտման, նրանց կրթության կազմակերպման և օժտվածության խնդիրների հետազոտման» հեղինակային կրթական ծրագիրը (հաստատված է ՀՀ կառավարության կողմից): 2014թ. նշված ծրագիրը ընդլայնվել և վերահաստատվել է ՀՀ ԿԳ նախարարության կողմից և ներկայումս լիարժեք ինտեգրում է ՀՀ պետական չափորոշչի և ՄԲ համապատասխան տարիքային ծրագրերի պահանջները:

Բացի վերոնշյալից՝ ՀՀ կառավարության որոշմամբ արտոնվել է իրականացնել 11-12-րդ դասարաններում ՄԲ դիպլոմային ծրագիրը (ՄԲ ԴԾ, IB DP)՝անգլերենով:

2010թ. «Մայքրոսոֆթ» ընկերության համաշխարհային գրասենյակի կողմից Ճեմարանը ճանաչվել է աշխարհի 56 ամենաառաջատար նորարար դպրոցներից մեկը:

2022թ.-ից Ճեմարանը «Միջազգային դպրոցների խորհրդի» (CIS, Council of International Schools) անդամ է:

1. Ճեմարանի բոլոր կառույցներում ուսուցումը կատարվում է վճարովի հիմունքներով, բացառությամբ 5-12-րդ դասարանների համար սահմանված քանակությամբ մասնակի պետական սուբսիդավորմամբ (այսուհետ՝ պետական համաֆինանսավորում) տեղերի, որտեղ ուսուցումը համաֆինանսավորվում է ծնողի և պետության կողմից:
2. Ճեմարանի կրթական կառույցներն են.
   2.1. **մանկակրթարան** (3- 5 տարեկաններ)
   2.2. **կրտսեր դպրոց** (1- 4-րդ դասարաններ)
   2.3. **միջին դպրոց** (5-10-րդ դասարաններ)

   10-րդ դասարանում ուսուցումը կազմակերպվում է չորս հոսքերով (հումանիտար, բնագիտական, տնտեսագիտական, ֆիզմաթ):

   2.4. **ավագ դպրոց** (11-12-րդ դասարաններ).

   11-12-րդ դասարաններում ուսուցումը կազմակերպվում է առարկաների լայն ընտրությամբ տարբերակված հոսքերով և/կամ ՄԲԴԾ ծրագրով՝անգլերենով:

3. Սովորողների հաշվարկային թիվը կրտսեր դպրոցի խմբերում սահմանվում է առավելագույնը 15, միջին և ավագ դպրոցների խմբերում՝ առավելագույնը 18: Ուսումնադաստիարակչական գործընթացը կազմակերպվում է երկարացված օրվա աշխատակարգով: Սովորողներն ապահովվում են սննդով՝ ըստ հաստատված սննդակարգի: Անհրաժեշտության դեպքում՝ կարող է տրամադրվել հանրակացարան: Բոլոր սովորողների տեղափոխումը կատարվում է Ճեմարանի կողմից՝ ***<u>հատուկ տրանսպորտային միջոցներով, իսկ մանկակրթարանում և կրտսեր դպրոցում՝ համապատասխան մանկավարժների ուղեկցությամբ</u>***:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ճեմարանում ընդունելության գործընթացը համակարգվում է Ճեմարանի տնօրենի հրամանով կազմավորված ընդունող հանձնաժողովի կողմից (Ընդունող հանձնաժողով):
2. Ընդունելության քննությունների և հարցազրույցների արդյունքների հիման վրա ընդունող հանձնաժողովը իրականացնում է ընդունելության մրցույթը, որոշում է կայացնում դիմորդներին ընդունելության երաշխավորության կամ մերժում տալու վերաբերյալ: Մրցույթով անցած և երաշխավորված դիմորդները Ճեմարանի համակազմում ընդգրկվում են Կրթական ծրագրի իրականացման պայմանագիր կնքելուց և հրամանագրվելուց հետո:
3. Ընդունելությանն առնչվող բոլոր հարցերը, որոնք նախատեսված չեն սույն քաղաքականության մեջ, վճռում է Ընդունող հանձնաժողովը:
4. Ընդունող հանձնաժողովի որոշումները ուժի մեջ են մտնում Ճեմարանի տնօրենի կողմից հաստատվելուց հետո:

3. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ՏԵՂԵՐՈՒՄ

3.1 Ճեմարանի պետական համաֆինանսավորմամբ տեղերում ընդունելությունը կազմակերպվում է հունիսին՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա սեպտեմբեր ամսվա համար:

ա) 8-րդ դասարանում (30 տեղ)

բ) 10-րդ դասարանում (մինչև 5 տեղ)

գ) Առանձնահատուկ ընդունակություններ դրսևորած, այդ թվում՝ հանրապետական օլիմպիադաներում 1-ին, 2-րդ կամ 3-րդ կարգի մրցանակների արժանացած սովորողները կարող են ընդունվել Ճեմարանի համապատասխան դասարանի պետական համաֆինանսավորմամբ տեղերում, ընդունելության քննությունների դրական արդյունքների հիման վրա՝ առանց մրցույթի, ամբողջ տարվա ընթացքում թափուր տեղերի առկայության դեպքում:

դ) Ճեմարանում անցկացված հանրապետական հանրակրթական բաց օլիմպիադայում ընդհանուր արդյունքով 1-ին, 2-րդ կամ 3-րդ կարգի դիպլոմի արժանացած և հավաստագիր ստացած սովորողները կարող են ընդունվել Ճեմարանի համապատասխան դասարանի պետական համաֆինանսավորմամբ տեղերում, առանց ընդունելության քննություններ հանձնելու, մեկ ուսումնական կիսամյակի ընթացքում՝ թափուր տեղերի առկայության դեպքում:

ե) Համաֆինանսավորմամբ տեղերի մրցույթին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիները և երկքաղաքացիները՝ համաձայն 2024թ. փետրվարի 21-ի պետական սուբսիդիայի պայմանագրով սահմանված (համաֆինանսավորմամբ) և առանց պետական սուբսիդիայի (վճարովի) տեղերի համալրման կարգի:

4. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐՈՒՄ

4.1 Միջին դպրոցի ու ավագ դպրոցի հեղինակային ծրագրի վճարովի տեղերում ընդունելությունն իրականացվում է մրցութային հիմունքներով՝ առաջին կամ երկրորդ կիսամյակի համար հունիս կամ դեկտեմբեր- հունվար ամիսներին՝ թափուր տեղերի առկայության դեպքում:

4.2 Միջին դպրոցի դասարաններում հունիս ամսին կայացած ընդունելության քննությունների ավարտից հետո թափուր տեղեր առաջանալու դեպքում ընդունող հանձնաժողովի որոշմամբ կարող է կազմակերպվել ընթացիկ ընդունելություն, որին մասնակցելու հնարավորություն ստանում են միայն կիրակնօրյա դպրոցի սաները:

4.3 Արտասահմանյան երկրների աշակերտների ընդունելությունը բոլոր դասարաններում

կազմակերպվում է շուրջտարյա, թափուր տեղերի և ՃԵմարանում համապատասխան ռեսուրսների առկայության դեպքում՝ համաձայն համապատասխան կարգի (տե՛ս Հավելված 1):

4.4 Վճարովի տեղերում սովորողների համար կարող են սահմանվել կրթաթոշակներ՝ համաձայն *28 ապրիլի 2021թ. ՃԵմարանի կողմից ընդունված Կրթաթոշակների տրամադրման կարգի՝ ուսման վարձի նվազեցման տեսքով:*

5. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՀՈՒՆԻՍ ԱՄԻՍ)

Դիմորդները հանձնում են գրավոր քննություններ հետևյալ առարկաներից՝

Քննության կարգավիճակը	**5-8-րդ դասարաններ**	**9-րդ դասարան**	**10-12-րդ դասարաններ**
Մրցութային	Մայրենի (5-6-րդ դասարաններ) Հայոց լեզու (7-8-րդ դասարաններ)	Հայոց լեզու	
	Մաթեմատիկա	Մաթեմատիկա (հանրահաշիվ և երկրաչափություն)	
		Բնագիտական առարկաներ մեկ քննությամբ (քննաթերթիկը ներառում է հարցեր քիմիա, ֆիզիկա և կենսաբանություն առարկաներից)	*<u>Բնագիտական և ֆիզմաթ հոսքեր ընտրելու դեպքում</u>*՝ <u>Բնագիտական առարկաներ</u> (քննաթերթիկը ներառում է հարցեր քիմիա, ֆիզիկա և կենսաբանություն առարկաներից) *<u>Հումանիտար հոսք, արվեստի հոսք (միայն 11,12-րդ դասարաններ) ընտրելու դեպքում</u>*՝ <u>Հասարակագիտական առարկաներ</u> (քննաթերթիկը ներառում է հարցեր հասարակագիտություն, հայոց պատմություն և համաշխարհային պատմություն առարկաներից) *<u>Տնտեսագիտական հոսք ընտրելու դեպքում</u>*՝ Բնագիտական կամ հասարակագիտական առարկաներ (դիմորդի ընտրությամբ)
Ոչ մրցութային	Օտար լեզու՝ ռուսերեն	Օտար լեզու՝ ռուսերեն	
	Օտար լեզու՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, պարսկերեն՝ դիմորդի ընտրությամբ		

6. ԸՆԹԱՑԻԿ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԱՎԱՐՏԻՆ՝ ԴԵԿՏԵՄԲԵՐ-ՀՈՒՆՎԱՐ ԱՄԻՍ)

Դիմորդները հանձնում են գրավոր քննություններ հետևյալ առարկաներից՝

<table>
<tr><th>Քննության կարգավիճակը</th><th>5-7-րդ դասարաններ</th><th>8-րդ դասարան</th><th>9-րդ դասարան</th><th>10-12-րդ դասարաններ</th></tr>
<tr><td rowspan="3">Մրցութային</td><td>Մայրենի (5-6-րդ դասարաններ)
Հայոց լեզու (7-րդ դասարան)</td><td>Հայոց լեզու</td><td colspan="2">Հայոց լեզու</td></tr>
<tr><td rowspan="2">Մաթեմատիկա</td><td>Մաթեմատիկա</td><td colspan="2">Մաթեմատիկա (հանրահաշիվ և երկրաչափություն)</td></tr>
<tr><td colspan="2">Բնագիտական առարկաներ մեկ քննությամբ (քննաթերթիկը ներառում է հարցեր <u>քիմիա, ֆիզիկա և կենսաբանություն առարկաներից</u>)</td><td><u>Բնագիտական և ֆիզմաթ հոսքեր ընտրելու դեպքում</u>՝
Բնագիտական առարկաներ (քննաթերթիկը ներառում է հարցեր քիմիա, ֆիզիկա և կենսաբանություն առարկաներից)

<u>Հումանիտար հոսք, արվեստի հոսք (միայն 11,12-րդ դասարաններ) ընտրելու դեպքում</u>՝
<u>Հասարակագիտական առարկաներ</u> (քննաթերթիկը ներառում է հարցեր հասարակագիտություն, հայոց պատմություն և համաշխարհային պատմություն առարկաներից)

<u>Տնտեսագիտական հոսք ընտրելու դեպքում</u>՝
Բնագիտական կամ հասարակագիտական առարկաներ (դիմորդի ընտրությամբ)</td></tr>
<tr><td rowspan="2">Ոչ մրցութային</td><td colspan="4">Օտար լեզու՝ ռուսերեն</td></tr>
<tr><td colspan="4">Օտար լեզու՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, պարսկերեն՝ դիմորդի ընտրությամբ</td></tr>
</table>

7. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Ընդունելության գործընթացի կազմակերպման հիմնական դրույթներն են.

7.1 Բոլոր քննությունները կազմակերպվում են առկա ձևաչափով:

7.2 Քննական աշխատանքների արդյունքների ամփոփման համար կիրառվում է 200 միավորանոց համակարգ («0.1»-ից մինչև «20.0» միավոր՝ 0,1 սանդղակով)՝ սահմանելով նվազագույն դրական գնահատականը «8.0» միավոր:

7.3 Բոլոր քննություններն անցկացվում են ըստ հանրակրթական դպրոցների համապատասխան դասարանների առարկայական ծրագրերի պահանջների:

7.4 Մրցույթն անցկացվում է բոլոր քննությունները դրական գնահատականներով հանձնած սովորողների միջև՝ մրցութային քննություններից ստացած միավորների գումարի հիման վրա:

7.5 Մեկ (5-7-րդ դասարանների դեպքում) կամ երկու (8-11-րդ դասարանների դեպքում) առարկայից միավորների նվազագույն շեմը չհաղթահարած, սակայն հարցազրույցների արդյունքներով անհրաժեշտ պատրաստվածություն ցուցաբերած դիմորդները հանձնաժողովի որոշմամբ կարող են երաշխավորվել ընդունվելու Ճեմարանի համապատասխան դասարան պայմանական կարգավիճակով՝ մեկ կիսամյակ ժամկետով: Կիսամյակային արդյունքների (առաջադիմություն, Ճեմարանի սովորողի նկարագրին համապատասխանություն) ամփոփման հիման վրա տնօրենության խորհրդի որոշմամբ՝ սովորողը շարունակում է կամ չի շարունակում ուսումնառությունը Ճեմարանում:

7.6 Համաֆինանսավորմամբ տեղերի համար մրցույթից դուրս մնացած դիմորդները նույն գնահատականներով կարող են մասնակցել համապատասխան դասարանի վճարովի տեղերի մրցույթին՝ թափուր տեղերի առկայության դեպքում: Ճեմարանի վճարովի տեղերում սովորողները հետագայում կարող են տեղափոխվել պետական համաֆինանսավորմամբ տեղեր՝ համաձայն *21 փետրվարի 2024թ. Ճեմարանի կողմից ընդունված Պետական ֆինանսավորմամբ և վճարովի տեղերի համալրման կարգի*:

7.7 Հավասար միավորների դեպքում նախապատվությունը տրվում է ըստ ստորև ներկայացված հերթականության.

ա) ոչ մրցութային քննություններից առավելագույն գումարային միավորներ ստացած դիմորդներին,

բ) Ճեմարանի կիրակնօրյա նախապատրաստական դպրոցի սաներին,

գ) Ճեմարանի միջին/ավագ դպրոցի համապատասխան դասարանն ավարտած սաներին:

7.8 Բոլոր դիմորդները քննություններից առաջ անցնում են թեստավորում հոգեբանական ծառայությունում: Թեստավորման ժամկետները նշանակում է դիմումներն ընդունող և գրանցող խումբը:

7.9 Ընդունելության դիմում-հայտերն ընդունվում են մայիս ամսին, իսկ քննություններն անցկացվում են հունիս ամսին: Առաջին կիսամյակի ավարտին կազմակերպվող ընթացիկ ընդունելության դիմում-հայտերն ընդունվում են դեկտեմբեր ամսին, իսկ քննություններն անց են կացվում դեկտեմբեր-հունվար ամիսներին: Ժամկետները յուրաքանչյուր ուսումնական տարվա համար հրապարակվում են կայքում:

7.10 5-11-րդ դասարանի դիմորդները, որոնք ընդունելության բոլոր քննություններից ստացել են դրական գնահատականներ և Ընդունող հանձնաժողովի կողմից երաշխավորվել են ընդունվելու համապատասխան դասարան, հրավիրվում են հարցազրույցի, որի նպատակը սովորողի հետ նախնական ծանոթացումն է, ինչը նպաստում է խմբերի բաշխման, սովորողի հետ հետագա աշխատանքների արդյունավետ կազմակերպման գործընթացներին:

7.11 Ավագ դպրոցի Հեղինակային ծրագրի 12-րդ դասարանի ընդունելություն կազմակերպվում է միայն առանձնահատուկ դեպքերում՝ ընդունող հանձնաժողովի որոշմամբ:

7.12 Ավագ դպրոցի Հեղինակային ծրագրի 11-12-րդ դասարանների ընդունելության քննությունների առարկայական ցանկը կարող է փոփոխվել՝հաշվի առնելով ընտրված հոսքում ուսումնասիրվող առարկաները:

7.13 Հունիսին կայացած ընդունելության մասին որոշումը հրապարակվում է մինչև հուլիսի 10-ը, իսկ դեկտեմբեր-հունվարին կայացած ընդունելության մասին որոշումը՝ մինչև փետրվարի 10-ը www.shirakatsy.am կայքում:

7.14 Ավագ դպրոցի Դիպլոմային ծրագրից Հեղինակային ծրագիր փոխադրումն իրականացվում է ծնողի՝ կրթահամալիրի տնօրենին ուղղված դիմումի համաձայն, որում նշվում են ՀԾ-ում նախընտրած հոսքը և խորացված ուսուցմամբ առարկաները:

7.12.1 Փոխադրումն իրականացվում է խորացված ուսուցմամբ առարկաներից գիտելիքը ստուգող աշխատանքի դրական արդյունքի դեպքում:

7.12.2 Եթե ուսանողը փոխադրվում է կիսամյակի ընթացքում, ապա համապատասխանեցվում են ԴԾ և ՀԾ-ում ուսումնասիրված առարկայական ծրագրերը և գնահատման սկզբունքները:

7.12.3 Հենքային ուսուցմամբ ուսումնասիրվող առարկայական ծրագրերի անհամապատասխանության դեպքում բաց թողնված ուսումնական նյութի լրացումն իրականացվում է ամբիոնային հերթապահությունների ընթացքում, անհատական հանձնարարությունների միջոցով: Ծնողի դիմումի հիման վրա կարող են կազմակերպվել նաև լրացուցիչ պարապմունքներ:

7.15 Ցածր առաջադիմության պատճառով Ճեմարանից դուրս մնացած սովորողները կրկին կարող են դիմել Ճեմարան ընդունվելու համար առնվազն մեկ կիսամյակ այլ ուսումնական հաստատությունում սովորելուց հետո:

8. ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Ընդունելությանը մասնակցելու համար անհրաժեշտ է առցանց ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում-հայտ (այն կարող եք լրացնել անցնելով հետևյալ հղումով https://shirakatsy.am/forms),
- քննավարձի կտրոն,

  **Դիմում-հայտերի ընդունման և ընդունելության գործընթացին մասնակցելու համար սահմանվում է 15,000 ՀՀ դրամ միանվագ վճար (քննավարձ), որը վերադարձման ենթակա չէ: Քննավարձն անհրաժեշտ է փոխանցել Ամիո բանկի տվյալ հաշվեհամարին՝ 1150003768028007:*

  ***Քննավարձից ազատվում են երկկողմանի ծնողազուրկ, զոհված ազատամարտիկների, բազմազավակ (5 և ավելի երեխա ունեցող) ընտանիքների երեխաները, իսկ այլ դեպքերում՝ Ընդունող հանձնաժողովի որոշմամբ:*
- դիմորդի անձնագրի պատճեն, չունենալու դեպքում՝ ծննդյան վկայական,
- դիմորդի հանրային ծառայության համարանիշ (ՀԾՀ) կամ ՀԾՀ չունենալու մասին տեղեկանք,
- դիմորդի լուսանկար (3x4 չափսի),
- սանի նվաճումների վերաբերյալ տեղեկատվություն:

Մյուս անհրաժեշտ փաստաթղթերը ենթակա են պարտադիր ներկայացման ընդունվելուց հետո՝ պայմանագիր կնքելուց առաջ: Այդ փաստաթղթերն են՝

- տեղեկանք դիմորդի բնակավայրից,
- տեղեկանք դիմորդի առաջադիմության մասին՝ ուսումնառության ընթացիկ դասարանի վերաբերյալ նշումով,
- դիմորդի բժշկական քարտ (նախկին 026 ձև), արտերկրից դիմորդների դեպքում՝ բժշկական ապահովագրություն ուսումնառության ժամանակահատվածի համար:

9. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Մրցույթով անցած սաները համարվում են ընդունված սահմանված ժամկետներում ծնողների (կամ նրանց փոխարինող անձանց) հետ համապատասխան կրթական ծրագրի իրականացման պայմանագիր կնքելուց և հրամանագրվելուց հետո:

10. ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ

Հասցե՝ **ք. Երևան, Նոր Նորքի 5-րդ զանգված, Արտեմ Միկոյան փողոց, 35**
Հեռ.՝ ***+374 10 68 01 02, +374 44 64 01 26***
Էլ. հասցե՝ info@shirakatsy.am, admissionoffice@shirakatsy.am

11. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ընդունելությանն առնչվող, բայց սույն քաղաքականությամբ չնախատեսված բոլոր այլ հարցերը որոշում է Շիրակացու ճեմարանի տնօրենության խորհուրդը՝ հաշվի առնելով Ընդունող հանձնաժողովի առաջարկությունները:
2. Բացառիկ դեպքերում Ընդունող հանձնաժողովը կարող է որոշել վերջնաժամկետից հետո ներկայացված հայտերին ընթացք տալ:
3. Փաստաթղթերի էլեկտրոնային պատճենները վերբեռնվում են առցանց դիմումների գրանցման համակարգ (հղումը տեղադրված է Շիրակացու ճեմարանի պաշտոնական կայքում): Հայտը վավեր է համարվում, եթե առցանց հայտի գրանցման համակարգում աստղանիշով (*) նշված բոլոր փաստաթղթերը վերբեռնված են, իսկ ոչ աստղանիշով թվարկված փաստաթղթերը ենթակա են պարտադիր ներկայացման մինչև պայմանագիրը կնքելը:
4. Սույն կանոնակարգով, ինչպես նաև այլ կանոնակարգերով սահմանված ժամկետները, ըստ անհրաժեշտության, կարող են փոփոխվել: Փոփոխությունների դեպքում դրանք կհրապարակվեն https://shirakatsy.am/ կայքում:

Ծանոթագրություն. Հայտը լրացնելուց հետո համակարգը ինքնաշխատ հաղորդագրություն է ուղարկում հայտում նշված էլ. հասցեին՝ նշելով, որ հայտը հաջողությամբ ընդունվել է:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Կարգ

Արտասահմանյան երկրներից սովորողների ընդունելության և Ճեմարանում նրանց կրթության կազմակերպման

Սույն փաստաթղթով կանոնակարգվում են «Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիր արտասամանյան երկրներից դիմած սովորողների ընդունելության իրականացման և նրանց կրթության կազմակերպման գործընթացները:

Արտասահմանյան երկրների աշակերտների ընդունելությունը բոլոր դասարաններում կազմակերպվում է շուրջտարյա, եթե.

1. հիմնական ընդունելության ավարտից հետո համապատասխան տարիքային խմբերում առկա են թափուր տեղեր,
2. Ճեմարանում առկա են բավարար ռեսուրսներ սովորողի կարիքներին համապատասխան կրթություն կազմակերպելու համար,
3. դիմորդը հաջողությամբ հաղթահարում է ընդունելության քննությունները և հարցազրույցները:

Ընդունելությանը մասնակցելու համար ծնողը ներկայացնում է առցանց դիմում-հայտ:

Առաջնահերթությունը տրվում է արտերկրում դիվանագիտական ծառայությունից վերադարձող ընտանիքների երեխաներին:

Համապատասխան դպրոցի տնօրենը դիմորդի հետ կազմակերպում է հարցազրույց, որի արդյունքներով որոշվում են քննությունների անցկացման ձևաչափը և լեզուն:

Ընդունելության քննությունների անցկացման գործընթացը կազմակերպում է Ճեմարանի ընդունելության համակարգողը, բովանդակային պատասխանատուները համապատասխան ամբիոնների վարիչներն են, աշխատանքների ընդհանուր համակարգումը իրականացնում է տվյալ դպրոցի տնօրենը:

Ընդունելությունն իրականացվում է տվյալ ուստարվա ընդունելության քաղաքականությամբ համապատասխան դասարանի համար նախատեսված առարկաներից անցկացված ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա՝ մրցութային կարգով:

Քննական տարբերակները կազմելիս կարող են հաշվի առնվել նաև նախորդ դպրոցում տվյալ առարկայի ուսումնասիրության ծավալը և խորությունը: Քննություններից ստացած դրական գնահատականներն ուժի մեջ են մեկ ուսումնական ամսվա ընթացքում:

Օտար լեզվով կրթության անհրաժեշտության դեպքում կրթահամալիրի տնօրենին (այսուհետ՝ Տնօրեն) ներկայացվում է սանի նախնական ուսումնական պլանը, ինչպես նաև տեղեկատվություն օտար լեզվով դասավանդող ուսուցչական ռեսուրսի առկայության մասին:

Քննական աշխատանքների ստուգումը և վերանայումը կազմակերպում են համապատասխան ամբիոնները, որից հետո ընդունող հանձնաժողովին ներկայացնում են առաջարկություն ուսուցման կազմակերպման ձևի մասին:

Քննությունների արդյունքների հիման վրա ընդունող հանձնաժողովը որոշում է կայացնում դիմորդին Ճեմարան ընդունելու (կամ մերժելու) առաջարկության վերաբերյալ և այն ներկայացնում Տնօրենին: Մեկ (5-7-րդ դասարանների դեպքում) կամ երկու (8-11-րդ դասարանների դեպքում) առարկայից միավորների նվազագույն շեմը չհաղթահարած, սակայն հարցազրույցների արդյունքներով անհրաժեշտ պատրաստվածություն ցուցաբերած դիմորդները հանձնաժողովի որոշմամբ կարող են երաշխավորվել ընդունվելու Ճեմարանի համապատասխան դասարան պայմանական կարգավիճակով՝ մեկ կիսամյակ ժամկետով: Կիսամյակային արդյունքների (առաջադիմություն,

Ճեմարանի սովորողի նկարագրին համապատասխանություն) ամփոփման հիման վրա տնօրենության խորհրդի որոշմամբ՝ սովորողը շարունակում է կամ չի շարունակում ուսումնառությունը Ճեմարանում:

Ներկայացված առաջարկությունների հիման վրա Տնօրենն ընդունում է որոշում մերժման, կամ հակառակ դեպքում՝ սովորողի ձևակերպման և հրամանագրման մասին, որի մասին դպրոցի տնօրենը տեղյակ է պահում ծնողին:

Բացառիկ իրավիճակներում Տնօրենն իրավունք ունի միանձնյա որոշում կայացնել որևէ դիմորդի պայմանական կարգավիճակով Ճեմարան ընդունելու վերաբերյալ: Իրավիճակի բացառիկ լինելու հանգամանքը որոշում է Տնօրենը:

Ընդունող հանձնաժողովի որոշմամբ արտասահմանից եկած դիմորդի ուսումնառությունը Ճեմարանում երաշխավորվելու դեպքում, ծնողը ներկայացնում է անհրաժեշտ փաստաթղթերը (տե՛ս կետ 8): Ըստ անհրաժեշտության Ճեմարանը ծնողից կարող է պահանջել նաև տեղեկանք ակադեմիական փոխճանաչման ազգային կենտրոնից:

Ճեմարանի և ծնողի միջև կնքվում է պայմանագիր: Սանը հրամանագրվում է և կցվում համապատասխան խմբին, որից հետո միայն կարող է մասնակցել դասերին:

Համապատասխան դպրոցի առաջին իսկ տողանի ժամանակ սանը ներկայացվում է աշակերտական համայնքին:

Ընդունված սանի ապահովումը տրանսպորտով կատարվում է Ճեմարան ընդունվելու առաջին շաբաթվա ընթացքում, մինչ այդ սանի տեղափոխման պարտականությունները կրում է ծնողը:

Ընթացիկ ընդունելության կազմակերպման համար քննավարձի չափը սահմանվում է տվյալ ուստարվա ընդունելության քաղաքականությամբ:

Եթե դիմորդը որևէ առարկա չի ուսումնասիրել, ապա նա կարող է ընդունվել Ճեմարան այդ առարկայից անհատական ուսուցում կազմակերպելու պայմանով:

Հայոց լեզվին բավարար չափով չտիրապետող սանի ընդունելության գործընթացը կարող է կազմակերպվել օտար լեզվով: Լեզվական խնդիրների պատճառով խմբային ուսուցում կազմակերպելու անհնարինության դեպքում սովորողի կրթությունը կարող է կազմակերպվել անհատական եղանակով, մինչև ինտենսիվ ուսուցմամբ հայոց լեզվի իմացության անհրաժեշտ տիրապետման հասնելը: